

**ՄՐՔՈՒԹԻՒՆԸ ԵՒ
ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆԸ՝ ԳԻՆ
ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ**

Շատ դիրքին է սատանային հետ կռուիլ, ինչպես լոյսը խաւարին հետ կը պայքարի եւ բարին՝ չարին հետ: Սատանան խաւար է ու չարութիւն. եթէ մենք լոյս ըլլանք եւ բարի, կը հալածենք զայն, ինչպէս լոյսը կը հալածէ խաւարը, եւ բարին՝ չարը: Իսկ եթէ մենք ալ խաւար ըլլանք, այսինքն չար, ան կ'որսայ մեզ եւ խառնուելով կը միանանաք իրեն: Որպէսզի չպատահի ասիկա, միշտ գոհութիւն յայտնենք Աստուծոյ, ինչպէս «Երկինքը կը պատմէ Աստուծոյ փառքը»: Երկինքը ո՛չ թէ ձայնով կը փառաւորէ զԱստուած, այլ՝ իր կերպարանքով ու ըրիչները օրհնութեան կը մղէ: Նմանապէս, անոնք որոնք բարիք կը գործեն, անոնց պատճառաւ ուրիշները զԱստուած կը փառաւորեն:

Երբ շատերը կը խրատեն, ո՛չ թէ երկինքը օրհնակ կը բերեն, այլ՝ մարդիկ, որոնք զազաններէն աւելի չար էին եւ ետքէն հրեշտակներու հաւասար եղան եւ այս ձեռով բազմաթիւ չարեր բարի կ'ընեն: Եթէ երկինքը այսքան ժամանակ տեսնելով այդ բոլորը, չի կրնար չար մէկը բարի ընել, մինչ մարդը կը յաջողի իր նմանը բարի դարձնել, կը նշանակէ թէ մարդս շատ աւելի գեղեցիկ է քան՝ երկինքը ու բոլոր զարդերը: Հետեւաբար, եթէ անոնցմէ աւելի վար գտնուիք, ի՞նչպէս կրնանք արքայութեան արժանի ըլլալ, երբ ամէնքս ալ մեր գործերով ու խօսքերով միշտ կ'անարգենք զԱստուած, գոր անոնք կը փառաւորեն:



**Ինչո՞ւ համար սարկաւազներն ու
դպիրները արարողութեան յատուկ
շապիկներ կը հագնին:**

Եկեղեցական շապիկը Քրիստոսի անմեղութեան եւ սրբութեան խորհրդանիշն է: Իւրաքանչիւր սարկաւազ կամ դպիր շապիկ հագնելով իր վրայ զգեցած կ'ըլլայ Քրիստոսը:

Եկեղեցական շապիկը արտաքին նշան մըն է սարկաւազներուն եւ դպիրներուն՝ սրբութեամբ ծառայելու եւ զգուշութեամբ քալելու Աստուծոյ տան մէջ:

ԻՍԱՍՏՈՒՆ ԽՕՍՔԵՐ

Յոյսը հաւատքին յենարանն է: Վա՛յ անոր, որ այդ երկու անթացույթներէն զրկուած կը մնայ: Աստուած անգամ յոյսով ապրեցաւ, երբ իր Որդին Գեթսեմանիէն Գողգոթա կը բարձրանար. վաղուան յարութեան յոյսն էր ատիկա:

ՀԱՍՅԷ.



ՔՈՒ ԽՕՍՔԵՐ ԻՄ ՈՏՔԵՐՈՒՄ ՃՐԱԳ Է ՈՒ ԻՄ ՇԱԲՆԵՐՈՒՄ
ԼՈՅՍ
(Մդ.119.105)

ԺԳ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ , 7 ՓԵՏՐՈՒՄ 2021 ԹԻՒ 6

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ
Եւ. 63.18-64.12 Բ. Տիտ. 1.1-11
ՅԻՍՈՒՄ ԶՐԻՍՏՈՍԻ ԱԽԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ 7.37-52

Տօնին վերջին եւ հանդիսաւոր օրը, Յիսուս ոտքի կանգնած՝ բարձրաձայն կ'ըսէր. «Ով որ ծարաւ է՝ թող ինձի գայ եւ խմէ: Ով որ ինձի կը հաւատայ, ինչպէս Սուրբ գիրքը կ'ըսէ՝ «Անոր սիրտէն կենսատու ջուրի գետեր պիտի բխին»:

Յիսուս ասիկա կ'ըսէր Հոգիին համար, որ իրեն հաւատացողները պիտի ընդունէին. իսկ Հոգին տակաւին չէր սրբուած, քանի Յիսուս փառաւորուած չէր:

Ժողովուրդէն ոմանք երբ լսեցին այս խօսքերը, ըսին. «Ասիկա է ճշմարիտ մարգարէն»:

Ուրիշներ կ'ըսէին. «Քրիստոսն է»: Իսկ ոմանք ալ կ'ըսէին. «Միթէ Գալիլեայէ՞ն պիտի գայ Քրիստոսը: Սուրբ գիրքը չ'ըսէր՝ թէ Քրիստոս Դաւիթ թագաւորի սերունդէն պիտի ըլլայ եւ Դաւիթի քաղաքին՝ Բեթլեհեմի մէջ պիտի ծնի»:

Եւ Յիսուսի պատճառով տարակարծութիւններ յառաջ եկան ժողովուրդին մէջ: Ոմանք ուզեցին ձերբակալել զինք, բայց ոչ ոք համարձակեցաւ ձեռք զարնել:

Երբ տաճարին պահակները վերադարձան, աւագ քահանաներն ու Փարիսեցիները հարցուցին անոնց. «Ինչո՞ւ զինք հոս չբերիք»:

Պահակները պատասխանեցին. «Այս մարդուն պէս խօսող երբեք չենք տեսած»:

Փարիսեցիները ըսին. «Ի՞նչ, դո՞ւք ալ խաբուեցաք: Իշխանաւորներէն կամ Փարիսեցիներէն ոեւէ մէկը հաւատա՞ց անոր: Մեր Օրէնքը չգիտցող տգէտ ամբոխը միայն հաւատաց: Անոնք արդէն իսկ նզովուած են: Նիկողէմոս, Փարիսեցիներէն մէկը, որ նախապէս գիշերով եկած էր Յիսուսի մօտ, ըսաւ անոնց. «Արդեօք մեր Օրէնքը մարդս կը դատէ՞ նախքան զինք լսելը եւ զիտնալը թէ ինչ ըրած է»:

Անոնք պատասխանեցին Նիկողէմոսի. «Միթէ դո՞ւն ալ Գալիլեայէն ես: Բննէ՛ Սուրբ գիրքերը եւ պիտի տեսնես, թէ Գալիլեայէն մարգարէ չ'ըլլեր»:

Ապա ամէն մարդ իր տունը դարձաւ:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

Ս. Սահակ Պարթև Ս. Գրիգոր Լուսավորիչի տոհմէն, Մեծն Ներսէս Կաթողիկոսի որդին էր: Անոր ապրած կեանքի, վարած հայանպաստ քաղաքականութեան մասին մանրամասն տեղեկութիւններ կը հաղորդէ հինգերորդ դարու պատմիչ՝ Ղազար Փարպեցին իր «Հայոց պատմութեան» աշխատութեան մէջ:

Սահակ Պարթև Հայրապետ ծնած է Կեսարիա, 384 թուականին: Սուրբը կը ստանայ յունական կրթութիւն եւ կը դառնայ հմուտ ժամանակակից երաժշտական ու հռետորական արուեստին եւ փիլիսոփայութեան: Ս. Սահակ կ'ապրի իր հօր հոգածութեան ներքեւ: Թէեւ քաջ գիտակ էր յունարէն, ասորերէն եւ պարսկերէն գրականութեան, բայց աւելի խելամուտ էր Սուրբ Գիրքի ընթերցանութեան: Կը սիրէր աղօթել եւ լեցուն էր Աստուծոյ Հոգիով ու շնորհներով: Չափահաս դառնալէն ետք շրջապատը կը ստիպէ, որ Ս. Սահակ Պարթև մնայ աշխարհական, որպէսզի շարունակուի Լուսավորիչի տոհմը: Ան յաճախ Աստուծմէ կը խնդրէ, որ իրեն արու գաւակ մը պարգեւէ: Սակայն կը ծնի Սահականուշը:

Վաղարշապատ մայրաքաղաքի մայր եկեղեցոյ մէջ Աւագ Հինգշաբթի օր, պատարագի ընթացքին, Ս. Սահակ, որպէս սարկաւազ պէտք է սպասուորներ:

Պատարագի աւարտին, երբ ան նստած էր Ս. Սեղանին մօտ, վրան թմրութիւն մը կու գայ: Աստուծոյ հրեշտակը լուսաւոր մարդու կերպարանքով կ'երեւի եւ կը յայտնուի, որ պիտի դադրի Լուսավորիչի տան քահանայապետութիւնը, իսկ Արշակունեաց թագաւորութիւնն ալ պիտի խափանուի:

Ս. Սահակ կը նուիրուի քահանայապետական կարգին եւ միաժամանակ կը հոգայ եկեղեցոյ պէտքերը: Իր Սահականուշ դուստրն ալ կ'նուրթան կու տայ Համազասպ Մամիկոնեանին:

387-ին, կը ձեռնադրուի կաթողիկոս: Հակառակ տիրող քաղաքական անբարենպաստ պայմաններու, հայոց Վռամշապուհ թագաւորի եւ Ս. Սահակ կաթողիկոսի համատեղ ջանքերով երկիրը կ'ապրի խաղաղութեան մէջ ու կը բարգաւաճի: Վռամշապուհ բարեպաշտ թագաւորի օգնութեամբ ձեռնամուխ կ'ըլլայ բազմաթիւ վանքեր ու եկեղեցիներ կառուցելու եւ միաժամանակ կը նորոգէ Ս. Հռիփսիմեանց վկայարանը: Որոշ ժամանակ ետք միաբանելով Ս. Մեսրոպի հետ՝ կը զբաղի հայոց նշանագիրներ գտնելու սուրբ գործով: Իր աշակերտները կ'ուղարկէ գանազան քաղաքներ, որպէսզի գտնեն բազմաթիւ օգտակար գիրքեր, հայերէնի թարգմանեն եւ գործածեն հայոց դպրութեան մէջ: 417-ին Ս. Սահակ կը դիմէ Կայսեր եւ Կ. Պոլսոյ պատրիարքին, իր թռռան՝ Վարդան Մամիկոնեանի հայոց սպարապետ ճանչնալու խնդրանքով: Կայսրն ու Պատրիարքը յարգելով Հայաստանը կ'...

ՀԱՐՑՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆ ԲԱԺԻՆ

ՄԻՐՏ ՄԸ ԻՆՉՊԵՍ ԵՐՁԱՆԻԿ Կ'ԸԼԼԱՅ
Միրը մը որ միշտ կը ներէ ու կը սիրէ՝ երջանիկ կ'ըլլայ: Չներող ու չսիրող սիրտը լեցուն կ'ըլլայ դառնութեամբ, իսկ դառնութիւնը կը ցամքեցնէ մարդու մէջ երջանկութեան ամէն զգացում:

ՀՈԳԵԻՈՐ ՊԱՏԳԱՍ

Կեանքի ճամբան դժուարին է «Դէպի կեանք տանող դուռը նեղ է եւ ճամբան դժուարին, եւ քիչեր միայն կը գտնեն զայն» (Մտ. 7.14): Քրիստոս ինքն է դուռը (Յհ 10.7) եւ ինքն է ճամբան (Յհ. 14.6): Քիչ են հետեւորդները Քրիստոսի, որովհետեւ մարդիկ չեն ուզեր հանդիպիլ նեղ դռներու եւ դժուարին ճամբաներու: Մարդ արարածը աւելի հակամէտ է լայն դռներէ եւ դիւրին ճամբաներէ երթալ: «Դուռը նեղ է», որովհետեւ ատիկա կը բացուի յարատեւ աղօթքով միայն: «Ճամբան դժուարին է», որովհետեւ ատիկա Քրիստոսի ճամբան է, Գեթսեմանիի ճամբան է, խաչակրութեան ճամբան է: Մարդիկ կ'ուզեն արքայութեան հասնիլ առանց Արքային տուած խաչը կրելու, կ'ուզեն թագաւորել առանց Թագաւորին տուած լուծը ընդունելու (Մտ. 11.29):

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ
Աստուածաշունչը ուղղափառ, ճշգրիտ ու ամբողջական ճանաչողութիւնը հրամայական անհրաժեշտութիւն է քրիստոնէաներուս համար յատկապէս ներկայ ժամանակներուն, երբ տեսակ-տեսակ շարժումներ ու մտածողութիւններ սկսած են հարցականի տակ առնել Աստուածաշնչական ճշմարտութիւնները:
Արամ Ա. Կաթողիկոս

ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ ԿՈՒՉԵՍ...

ՓՈՐՉՈՒԹԵԱՆՅ ՄԷՋ ԅԱՐԱՏԵՒՈՒԹԻՒՆ՝ ՔՐԻՍՏՈՍԻ ՕՐԻՆԱԿՈՎ ԵՐԱՅԵՑՑԻՆԵՐՈՒՆ ՆԱՍԱԿԷՆ 12.1-7

Ուրեմն մենք ալ, որ այսքան բազմաթիւ վկաներով շրջապատուած ենք, վանե՛նք ամէն խոչընդոտ եւ մէկ կողմ ձգե՛նք մեղքը, որ մեզ դիրաւ կը պաշարէ եւ համբերատարութեամբ պայքարինք մեզի ներկայացող փորձութիւններուն դէմ: Մեր աչքերը յարե՛նք Յիսուսի, մեր հաւատքի հիմնադիրին ու կատարելագործողին, որ գիտնալով, թէ ինչ ուրախութիւն կը սպասէ իրեն՝ արհամարհեց ամօքը, յանձն առաւ խաչի վրայ մեռնիլ եւ Աստուծոյ արքին աջ կողմը նստաւ:

Որպէսզի երբեք չյուսալքուիք եւ չտկարանաք, մտաբերեցե՛ք, թէ Յիսուս ինչպիսի համբերութեամբ կրեց մեղաւորներու հակառակութիւնները: Դուք տակաւին ձեր արիւնը թափելու չափ դիմադրութիւն ցոյց չտուիք մեղքի դէմ պայքարին մէջ:

ԵՐԱՅԵՑՑԻՆԵՐՈՒՆ ՆԱՍԱԿԷՆ 12.5-9

... Ուստի համբերութեամբ ընդունեցե՛ք Աստուծոյ խրատը գիտնալով, որ հօր մը պէս կը վարուի ձեզի հետ: Կա՞յ գաւակ մը, որ իր հօրմէն յանդիմանութիւն ստացած չըլլայ: Ընդհակառակը, եթէ Աստուած ձեզ յանդիմանէ՝ ինչպէս կ'ընէ իր բոլոր որդիներուն, կը նշանակէ՝ թէ իր գաւակները չէք եւ խորթ էք իրեն: Մեր մարմնաւոր հայրերը երբ մեզ յանդիմանեն, կը դադրի՞նք զիրենք յարգելէ: Ո՛չ: Ուրեմն, որքան աւելի եւս հնազանդ պէտք է ըլլանք հոգիներու հօր, որպէսզի կեանք ունենանք: